



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 23 ՄԱՐՏ, 2026

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս յիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՇԱՐՄԱՆ

Ի քեզ նայիմք, լոյսդ անմատոյց, Ի զգայական ծածկեալ լուսոյ.

Որ վասն մեր եղար ի գբի Եւ ննջեցեր ի տապանի.

Առ մեզ ննջեա արթուն բնութիւն, Հերքեա զչարին ներգործութիւն.

Ձի ի տուրնջեան եւ գիշերի Տացուք քեզ փառս անընդի:

Էլիդ լուսոյ անատուերի Պաղատանօք կամք առաջի.

Որ փակեալ դրամքք յերեկոյին Երեւեցար մետասանին.

Ընդ Թովմայի առ քեզ կոչեմք, Տէր եւ Աստուած, զքեզ դաւանեմք.

Է՛ջ եւ առ մեզ յերեկոյիս, Եւ տուր զողջոյն քո ի Հոգիս:

Բամեաքս զքեզ, Տէր, աղաչեմք, Մեզ յօգնութիւն նայեա, Հայցեմք.

ՊաՀապանդ Իսրայելի, Անձանց մերոց լեր Հովանի.

Օթեա առ մեզ խաղաղարար, Եւ ննջեսցուք անխուղաբար.

Ձի ընդ առաւօտս կանխեսցուք, Օրհնել զքեզ՝ ընդ Հօր Հոգևով:

ԱՂՈՐՔ

Տէր Աստուած մեր, դուն խաղաղութեամբ պահէ մեզ այս գիշեր եւ ամէն ժամանակ: Քու սուրբ երկիրդ մէջ բերուած պահէ մեր միտքն ու խորհուրդները, որպէսզի միշտ Քեզմով պահպանուած ըլլանք թշնա-միին որոգայթներէն, եւ օրհնաբանենք ու փառաւորենք Քեզ՝ Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի, յաւիտեանս. ամէն:

ՇԱՐՄԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ:

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան գՏէր աղաչեսցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուած-ձայնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

ՇԱՐՄԱՆ - ԱՂՈՐՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցերոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղերոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՍԱՂՄՈՍ 102

ՏԱՌԱՊՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՄԸ ԱՂՕԹՔԸ

Այս բաները թող գրուին գալիք սերունդին համար,
եւ վերածնած ժողովուրդը թող օրհնութիւն երգէ Տիրոջ:
Որովհետեւ Տէրը իր սուրբ բարձունքէն վար նայեցաւ,
երկինքէն դիտեց երկիրը, լսեց հառաչանքը գերեալներուն,
եւ ազատ արձակեց մահուան դատապարտուածները:
Ահա թէ ինչու՝ Սիոնի մէջ Տիրոջ անունը պիտի հռչակուի,
օրհներգութիւն պիտի մատուցուի Երուսաղէմի մէջ,
երբ ժողովուրդներ ու թագաւորութիւններ
մէկտեղ հաւաքուին՝ Տէրը պաշտելու:
Ճամբուս կէսին՝ իմ գօրութիւնս առաւ, կարնցուց կեանքս:

Եւ ես ըսի. "Աստուած իմ, դուն՝ որ անվախնան ես,
կեանքիս կէսին մի առներ զիս:
Սկիզբէն երկրին հիմերը դրիր, ձեռներովդ ստեղծեցիր երկինքը:

Անոնք պիտի չֆանան, մինչդեռ Դուն պիտի մնաս.
անոնք պիտի մաշին հագուստի պէս,
զգեստի պէս պիտի փոխես Դուն զանոնք, եւ անոնք պիտի անցնին:
Բայց Դուն միշտ նոյնն ես, Քու տարիներդ բնաւ վերջ չունին:
Քեզի ծառայողներուն որդիները հովանիիդ տակ պիտի բնակին,
եւ անոնց սերունդները Քու ներկայութեանդ պիտի հաստատուին":

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԹԸ



ՍԱՂՄՈՍ 102

ՏԱՌԱՊՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՄԸ ԱՂՕԹՔԸ

Շարունակելով վերջին բաժինը 102 Սաղմոսին, կը սկսի հետեւեալ յայտարարութեամբ. «Այս բաները թող գրուին գալիք սերունդին համար»: Հետաքրքրական է արտայայտութիւնը. «Գալիք սերունդին համար»: Երեւի առաջին իսկ ակնարկով հասկնանք, որպէս Իսրայէլի գալիք սերունդը: Բայց երբ կը կարդանք Եկեղեցական հայրերու գրութիւնները, ապա անոնք այս փողին մէջ կը փնտնեն, որպէս գալիք սերունդ՝ հեթանոս աշխարհը, որոնք պիտի վերածնէին եւ Աստուծոյ օրհնութիւն երգէին: Պօղոս Առաքեալ կ'ըսէ. Անգամ մը որ Քրիստոսի միացած էք, նոր արարած էք: Ահա Տէրը իր սուրբ բարձունքէն վար նայեցաւ, ակնարկութիւնն է, Քրիստոսի աշխարհ գալուն, Ինքզինք խանարհեցնելուն, եւ անով խոնարհները բարձրացնելու: Լսեց հառաչանքը գերեալներուն, եւ ազատ արձակեց մահուան դատապարտուածները: Այո, մեղքը մահուան դատապարտեց մարդս, սակայն, Քրիստոսի աշխարհ գալուստով, Ան ազատեց մահուան դատապարտուածները, որոնց առաջին օրինակը եղաւ Իր սիրելի բարեկամ Ղազարոսը, 4 օրուան մահացած, սակայն դուրս կանչեց զինք մեռելութենէն: Քրիստոսի աստուածային ձայնն էր որ դուրս կանչեց եւ կրաւով պարանքուած, սա-կայն գալեց ու դուրս եկաւ, եւ Քրիստոս պարուիրեց որ ազատ արձակեն զինք: Եւ այսօր Եկեղեցին, իրեն փրուած Քրիստոսի կողմէ նոյն իշխանութեամբ, ազատ արձակելու մեզ մեր մեղքերէն. «Ինչ որ կապէք, կապուած ըլլայ, ինչ որ արձակէք, արձակուած ըլլայ»: Սիոնի մէջ Տիրոջ անունը պիտի հռչակուի: Այսպէս Սիոնը նոյնիսկ Եկեղեցին է, որուն մէջ Տիրոջ անունն է որ կը հռչակուի: Երբ է որ այս բաները պիտի կա-րար-ուին, երբ ժողովուրդներ ու թագաւորութիւններ մէկտեղ հաւաքուին Տէրը պաշտելու: Յետոյ, համեմատաբար կան է որ կ'ընէ մարդուս կեանքին ու Աստուծոյ միջեւ: Մարդուս կեանքը կարճ, սահմանափակ, ժամանա-կաւոր, իսկ Աստուած՝ անվախճան: Սկիզբէն երկրին հիմերը դրած, ձեռներովը երկինքը ստեղծած: Պարկե-րաւոր ձեւով կը ներկայացնէ: Չնայած անոնք պիտի ջրանան, բայց Աստուած յաւիտեան կայ ու կը մնայ: Ահա մարդուս սահմանափակ կեանքը պիտի փոխարինուի յաւիտեանականի, երբ Աստուծոյ հովանիին տակ մտնէ ու բնակի, եւ անոնց սերունդները Աստուծոյ ներկայութեան պիտի հաստատուին: Ահա փառապանքի կանչով սկսած, լսելու խնդրանքով, բայց արդէն կը հասնինք յարութեան յոյսին ու յաւիտեանական կեանքը ժառանգելու խոստումին Քրիստոսով: